Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք

# ՀՐԱՀԱՆԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԼԿՑԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1937

355.233.23:3кем

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք․

A 37325

է 1961 թ.

# ՀՐԱՀԱՆԳ

# ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԼԿՅԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

2075

Հաստատված Համ Կ(բ)Կ Կենտկոմի կողմից հունվարի 16-ին, 1937 թ․

ՊԵՏՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1937

## ԲԳԿԲ ՔԱՂՈՐԳԱՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՊԵՏԵՐԻՆ, ՌԱԶՄԿՈՄՆԵՐԻՆ (ՔԱՂՈԳՆԱԿԱՆՆԵՐԻՆ) ՀԱՄ Կ(Բ)Կ ԵՎ ՀԱՄԼԿՑԵՄ ԲՈԼՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայտարարում եմ Համ Կ (բ)Կ կենտկոմի և ՀԱՄԼԿՑԵՄ կենտկոմի կողմից հաստատված «ՀՐԱՀԱՆԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԼԿՑԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ» անշեղ ղեկավարության համար:

1930 թ. նոյեմբերի 22-ի «Կարմիր բանակի ՀԱՄԼԿՑԵՄ բջիջների աշխատանքի կանոնադրությունը» համարել չեղյալ:

ԲԳԿԲ ՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ— ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՄԻՍԱՐ՝

ՅԱ. ԳԱՄԱՐՆԻԿ

1937 *թ. հունվարի* 17, № 5

«ՀԱՍՏԱՏՎՈՒՄ Է»

*ՀԱՄԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար—*

Ա. ԱՆԴՐԵՅԵՎ

*ՀԱՄԼԿԵՄ Կենտկոմի քարտուղար—*

Ա. ԿՈՍԱՐԵՎ

*ԲԳԿԲ Քաղվարչության պետ—*

ՅԱ. ԳԱՄԱՐՆԻԿ

16 *հունվարի*, 1937 *թ.*

# ՀՐԱՀԱՆԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԼԿՅԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

*Կոմյերիտմիությունը Կարմիր բանակում հանդիսանում է ՀԱՄԼԿՅԵՄ բաղկացուցիչ և անբաժան մասը, Համկ(բ)Կ կազմակերպության օգնականը և նրա ռեզերվը։*

ՀԱՄԼԿՑԵՄ կազմակերպություննե-
րը Կարմիր բանակում իրենց ամբողջ աշխատանքով պարտավոր են օգնել զորամասերի հրամանատարությանն ու կուսկազմակերպություններին՝ ամրաց նելու Բանվորագյուղացիական Կարմիր բանակի մարտական հզորությունը, միաձուլելու նրա բոլոր մարտիկներին ՀամԿ(բ)Կ-ի շուրջը, դաստիարակելու նրանց խորհրդային հայրենա սիրության ոգով, դեպի ԽՍՀՄ—դեպի իրենց հայրենիքը—անսահման նըվիրվածության և սիրո ոգով: «Անձնվիրաբար պաշտպանել սոցիալիստական հայրենիքը, ամրացնել նրա հզո րությունը, բարգավաճումն ու փառքը— ՀԱՄԼԿՑԵՄ անդամի ամենասրբազան ու կենսական պարտականությունն է» (ՀԱՄԼԿՑԵՄ ծրագիր):

Կոմյերիտական կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր

կոմյերիտականին դաստիարակել, վորպես կայուն, Լենին-Ստալինի գործին նվիրված մարտիկ, վորպես իր հայրենիքի ջերմ հայրենասեր, վորը «պատրաստ ե նրա համար նվիրելու իր բոլոր ուժերը, իսկ յեթե կարիք լինի,—նաև իր կյանքը» (ՀԱՄԼԿՑԵՄ կանոնադրություն)։ Կարմիր բանակի ՀԱՄԼԿՑԵՄ անդամը պարտավոր ե լինել խիստ կարգապահ մարտիկ, ռազմական գործին կատարելապես տիրապետող, իր մարտական տեխնիկան գերազանց իմացող։

Կոմյերիտական կազմակերպությունները պարտավոր են սիստեմատիկ աշխատել բարձրացնելու կոմյերիտականների գաղափարական-քաղաքական մակարդակը, նրանց կողմից ուսումնասիրելու Լենին-Ստալինի կուսակցության պատմությունը։ Կոմյերիտական կազմակերպությունները պար-

տավոր են ամեն որ ծանոթացնել ՀԱՄԼԿԵՍՄ անդամներին միջազգային հեղափոխական պայքարի դեպքերի հետ, դաստիարակելով յուրաքանչյուր կոմյերիտականին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով:

ՀԱՄԼԿԵՍՄ կազմակերպությունների ամբողջ աշխատանքը Կարմիր բանակում անց ե կացվում զորամասերի քաղորդանների, ռազմական կոմիսարների (քաղաքական օգնականների) և կուսակցական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ և հանդիսանում ե կուսակցական-քաղաքական աշխատանքի անբաժանելի մի մասը:

## I. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1. Կարմիր բանակի կոմյերիտական կազմակերպության կառուցվածքի առանձնահատկությունները, որոնք բխում են հենց Կարմիր բանակի կազմակերպման հատուկ բնույթից, նըրանում են, որ ղեկավար մարմինների ընտրելիությունը ԲԳԿԲ կոմյերիտական կազմակերպություններում գոյություն ունի միայն գնդային ու վաշտային (սրանց համազոր) կոմյերիտական կազմակերպությունների համար։

ՀԱՄԼԿՅԵՄ աշխատանքը Կարմիր բանակում ղեկավարում է ԲԳԿԲ Քաղաքական վարչությունը։ Բանակային կոմյերիտմիության աշխատանքի սկզբ

բունքային հարցերը համաձայնեցվում են ՀԱՄԼԿԵՍՄ կենտկոմի հետ։

Ռազմական շրջաններում (տորմիղներում, բանակներում) և դիվիզիաներում (բրիգադներում, դպրոցներում) կոմյերիտական աշխատանքը ղեկավարում են շրջանների (տորմիղների, բանակների) քաղաքական վարչությունները և դիվիզիաների (բրիգադների, դպրոցների) քաղբաժինները։

Շրջանային քաղվարչությունների ու դիվիզիաների քաղբաժինները, ԲԳԿԲ Քաղվարչության դիրեկտիվների համապատասխան ցուցումներ են տալիս ստորադաս կոմյերիտական կազմակերպությունների, հրահանգում են նրանց, հաշիվ յեն առնում ու ընդհանրացնում են նրանց աշխատանքի փորձը, գումարում ու անց են կացնում շրջանային և դիվիզիական կոմյերիտական կոնֆերանսներ։

2. ԲԳԿԲ կոմյերիտմիության ըս-

կըզբնական կազմակերպություն է հանդիսանում առանձին զորամասի (գնդի, առանձին գումարտակի, էսկադրիլիայի, նավի և այլն), հիմնարկության և դպրոցական հաստատության կոմյերիտական կազմակերպությունը, վորը կազմակերպում է զորամասի ռազմկոմը (քաղոգնականը), յերբ կան վոչ պակաս, քան ՀԱՄԼԿՑԵՄ 3 անդամ:

Այն ռազմական դպրոցներում, վորտեղ կան քաղբաժիններ, սկզբնական կոմյերիտական կազմակերպություն է հանդիսանում գումարտակի (դիվիզիոնի) կազմակերպությունը:

Ռազմական ակադեմիաներում ըսկըզբնական կազմակերպություն է հանդիսանում ֆակուլտետի կազմակերպությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: Այն ակադեմիաներում, վորտեղ ֆակուլտետներում պահանջված թվով չկան

ՀԱՄԼԿՑԵՄ անդամներ, որը նախատեսված է 2-րդ կետում, սկզբնական կոմյերիտական կազմակերպություն է ստեղծվում ամբողջ ակադեմիայի մասշտաբով:

Սկզբնական կոմյերիտական կազմակերպությունները հաստատվում են համապատասխան քաղշրջկոմների կողմից:

3. Կարմիր բանակի զորամասերում, հիմնարկություններում և դպրոցական հաստատություններում սկզբնական կոմյերիտական կազմակերպության ներսում, որն ընդգրկում է ամբողջ զորամասը, հիմնարկությունը, դպրոցական հաստատությունը, եթե կան ստորաբաժանման մեջ կոմյերիտմիության ոչ պակաս երեք անդամ, ստեղծվում են վաշտի, մարտկոցի, ջոկատի և այլն կոմյերիտական կազմակերպություններ: Կոմյերիտական կազ-

մակերպությունները ստորաբաժանումներում կազմակերպվում և հաստատվում են զորամասի կոմիտեի (քաղ. ոգնականի) կողմից։

## II ԿՈՄԵՐԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Կոմյերիտական կազմակերպության բարձրագույն ղեկավար օրգանն և հանդիսանում տվյալ կազմակերպության անդամների ընդհանուր ժողովը։

5. Կոմյերիտական ժողովները լսում ու քննարկում են ՀամԿ(բ)Կ և ՀԱՄԼԿԵՍՄ կարևորագույն վորոշումները, ԽՍՀՄ միջազգային և ներքին դրության հարցերը, այլև կոմյերիտական աշխատանքի գործնական հարցերը։

Կոմյերիտական ժողովների օրակարգերը կազմվում են, հաշվի առնելով կոմյերիտականների շահերն ու պահանջները և պետք է հայտարարվեն վոչ ուշ, քան ժողովից յերեք օր առաջ:

6. Ներմիութենական կյանքի հարցերը, կոմյերիտական բյուրոների քարտուղարների հաշվետվությունների, նախագահությունների, քարտուղարների (կոմյերիտկազմակերպիչների) հաշվետվությունները քննարկելու համար կոմյերիտկազմակերպություններն անց են կացնում կոմյերիտական փակ ժողովներ: Փակ ժողովների հետ միասին, անց են կացվում նաև կոմյերիտական բաց ժողովներ, վորտեղ հրավիրվում են կոմյերիտական վոչ-անդամ կարմիր բանակայիններն ու հրամատարները:

7. Զորամասերում կոմյերիտական

կազմակերպությունների ժողովներ են հրավիրվում կանոնավոր կերպով, այն հաշվով, վորպեսզի սկզբնական և վաշտային (եսկադրոնային, մարտկոցային և այլն) կազմակերպությունների բոլոր ժողովների թիվը, վորպես կանոն, մեկ ամսում 3 ժողովից ավելի չլինի։ Ժողովն որինական է, յեթե ներկա յե կոմյերիտական տվյալ կազմակեպության անդամների վոչ պակաս 2/3-րդ մասը։

8. Կոմյերիտական կազմակերպության յուրաքանչյուր ժողովում ընտրվում է նախագահություն, վորը ղեկավարում է ժողովը և վարում է արձանագրությունը։

9. Այն դեպքերում, յերբ զորամասը դասավորված է մի քանի կայազորներում, այլև մարտական առաջադրանք կատարելու դեպքում, պահակային ծառայություն և այլն կատա-

րելու ժամանակ, երբ չի կարելի կոմյերիտական ընդհանուր ժողով անց կացնել, հրավիրվում է պատգամավորական ժողով, վորն ունի ընդհանուր ժողովի իրավունք: Պատգամավորներն ընտրվում են վաշտային (և նրանց համազոր) կոմյերիտական կազմակերպությունների ժողովներում հետևյալ հաշվով՝ կոմյերիտկազմակերպության 5-10 անդամից մեկ պատգամավոր: Կոմյերիտական բյուրոյի անդամները պատգամավորական ժողովում օգտվում են վճռական ձայնի իրավունքով:

## III ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

10. Սկզբնական կոմյերիտական կազմակերպությունն ընթացիկ աշխատան-

քը վարելու համար ընտրում է կոմյերիտական բյուրո մեկ տարի ժամանակով։

Յեթե կոմյերիտական կազմակերպության մեջ կան մինչև ՀԱՄԼԿՅԵՄ 100 անդամ, բյուրո յե ընտրվում 5 անդամի կազմով. 100-ից ավելի՝ 7 անդամի կազմով։

Այն սկզբնական կոմյերիտական կազմակերպության մեջ, վորտեղ կոմյերիտմիության անդամների թիվը 10-ից պակաս է, կոմյերիտական բյուրո չի ստեղծվում, այլ ընտրվում է սկզբնական կոմյերիտական կազմակերպության քարտուղար։

11. Կոմյերիտական բյուրոն — կենսագործում է կուսակցական և կոմյերիտական մարմինների վորոշումները և սիստեմատիկ ստուգում է յուրաքանչյուր կոմյերիտականի կողմից այդ վորոշումների կատարումը։

Ապահովում է յուրաքանչյուր կոմյերիտականի իսկական առաջավոր դերը մարտական ուսուցման, տեխնիկայի տիրապետման գործում, զինվորական կարգապահության մեջ և սոցիալիստական մրցակցության գործում.

Ապահովում է բոլոր կոմյերիտականների ուսուցումը դպրոցներում և միութենական լուսավորության խըմբակներում.

Կազմակերպում է կոմյերիտականների համար ռազմատեխնիկական և հանրակրթական խմբակներ.

Սիստեմատիկ աշխատանք է տանում կոմյերիտական ակտիվի դաստիարակության ուղղությամբ.

Կոմյերիտականներին ներգրավում է կարմիր բանակայինների մեջ տարվող մասսայական քաղաքական աշխատանքին.

Լսում է կոմյերիտական դպրոցների ու խմբակների ղեկավարների և կոմյերիտական աշխատանքի առանձին բնագավառների կազմակերպիչների զեկուցումները, այլև կոմյերիտականների անհատական հաշվետվությունները·

Լսում է ակումբի պետի զեկուցումները և վորոշումներ է հանում ակումբի կողմից կոմյերիտականների հետ տարվող աշխատանքի մասին· այդ վորոշումներն ուժի մեջ են մտնում զորամասի ռազմկոմի (քաղոգնականի) հաստատումից հետո·

Կազմակերպում է վաշտի և գնդային մամուլում կոմյերիտական աշխատանքի լուսաբանումը։

12· Կոմյերիտական բյուրոյի և ընդհանուր ժողովի վորոշումները կիրառելու ու ընթացիկ բոլոր հարցերը լուծելու համար կոմյերիտական բյու–

րոն իր կողմից ընտրում է կոմյերիտական բյուրոյի քարտուղար։

Կոմյերիտական բյուրոյի քարտուղարի համար պարտադիր է ունենալ վոչ պակաս յերկու տարվա կուսստաժ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Ավելի պակաս կուսստաժով քարտուղարի ընտրությունը կատարվում է միայն քաղորգանների թույլտվությամբ։

Կոմյերիտական բյուրոյի քարտուղարին հաստատում է շրջանի (տարմիզի) Քաղվարչության պետը։

13․ Կոմյերիտական բյուրոյի քարտուղարը կազմակերպում է բյուրոյի աշխատանքը, նախապատրաստում է նրա նիստերը և կոմյերիտական կազմակերպության ընդհանուր ժողովները, ստուգում է բյուրոյի, կոմյերիտական կազմակերպության ընդհանուր ժողովների վերադաս քաղորգանների

ցուցումների ու դիրեկտիվների կատարումը:

Կոմյերիտական բյուրոյի քարտուղարը պարտավոր է իր ժամանակի մեծ մասն աշխատել ստորաբաժանումներում, սովորեցնել ու դաստիարակել կոմյերիտական ակտիվին, լինել կոմյերիտականների կոմունիստական դաստիարակության իսկական կազմակերպիչ:

14․ Կոմյերիտական բյուրոյի անդամներն աշխատանք են կատարում ստորաբաժանումների կոմյերիտական կազմակերպություններում կոմյերիտական բյուրոյի առաջադրանքների համեմատ:

Կոմյերիտական աշխատանքի առանձին ճյուղեր (քաղկրթություն, կուլտուր—մասսայական աշխատանք, ֆիզկուլտուրական աշխատանք, հանրա

կրթական պատրաստություն, տեխնիկական ուսուցում) կազմակերպելու համար, կոմյերիտական բյուրոյի անդամների թվից և ակտիվ կոմյերիտականներից առանձնացվում են կազմակերպիչներ, վորոնք իրենց աշխատանքում կանոնավոր կերպով հաշվետու յեն կոմյերիտական բյուրոյի առաջ:

## IV ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ (ԿՈՄՅԵՐԻՏ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

15. Վաշտային (և նրան համազոր) կոմյերիտական կազմակերպության մեջ, յեթե ՀԱՄԼԿՅԵՄ անդամների և թեկնածուների թիվը 30-ից ավելի յե, վաշտի կոմյերիտական ժողովում ընտրվում է նախագահություն 3—5 անդամի կազմով: Այն կազմակերպության մեջ, վորտեղ անդամների թիվը 30-ից պակաս է, նախագահություն չի

ստեղծվում, այլ ընտրվում է կոմյե-
րիտկազմակերպիչ:

16. Կոմյերիտական կազմակերպության նախագահության և ժողովների որոշումները կենսագործելու, այլև բոլոր ընթացիկ հարցերը լուծելու համար, նախագահությունն իր կազմից ընտրում է նախագահության քարտուղար:

17. Նախագահության անդամները պարտավոր են ամեն օր տանել դաստիարակչական աշխատանք դասակներում և ջոկերում, բացատրել մարտիկներին կուսակցության որոշումները, անցկացնել զրույցներ, թերթերի ընթերցանություններ, յուրաքանչյուր կարմիր բանակայինին ներգրավել ակտիվ հասարակական-քաղաքական աշխատանքի:

Կոմյերիտական աշխատանքի այս կամ այն ճյուղի ղեկավարության վե-

բերյալ միջանկյալ առաջադրանքի հետ միասին, նախագահության յուրաքանչյուր անդամ կատարում է նախագահության քարտուղարի առանձնահատկությունները:

18. Նախագահության քարտուղարը (կոմյերիտկազմակերպիչը) անձամբ ղեկավարում է կոմյերիտականների քաղաքական դաստիարակությունը, կազմում է աշխատանքի պլան, նախապատրաստում է կոմյերիտական ժողովներ և նախագահության նիստերը, սերտ կապ է պահում կուսկազմակերպիչի և քաղաքական ղեկավարի հետ, ամեն որ անց է կացնում կատարման ստուգում:

Նախագահությունների քարտուղարներին և կոմյերիտկազմակերպիչներին հաստատում է դիվիզիայի քաղբաժնի պետը:

## V․ ՀԱՄԼԿՑԵՄ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԸ

19․ Շրջանային և դիվիզիական կոմյերիտական կոնֆերանսներ են հրավիրում շրջանային քաղվարչությունները և դիվիզիաների քաղբաժինները մեկ ու կես տարին մեկ անգամ։

ՀԱՄԼԿՑԵՄ կոնֆերանսների հրավիրման ժամկետները և ներկայացուցիչների նորմաները սահմանվում են ԲԳԿԲ քաղվարչության կողմից ՀԱՄԼԿՑԵՄ Կենտկոմի հետ միասին։

20․ Դիվիզիական կոնֆերանսների պատգամավորներն ընտրվում են ըսկըզբնական կոմյերիտական կազմակերպությունների ընդհանուր ժողովներում։ Շրջանային կոնֆերանսների պատգամավորներն ընտրվում են դիվիզիական (բրիգադային) կոնֆերանսներում։

21․ Դիվիզիական և շրջանային կոն–

ֆերանսները լսում ու քննարկում են ընդհանուր միութենական հարցերը, լսում են զեկուցումներ զորամասերի մարտական ու քաղաքական պատրաստության խնդիրների մասին, լսում են ՀԱՄԼԿԵՄ տեղական կոմիտեների զեկուցումները և այդ կապակցությամբ նշում են գործնական միջոցառումներ։

22. Դիվիզիական կոմյերիտական կոնֆերանսների վորոշումները հաստատում են դիվիզիաների քաղբաժինների պետերը, իսկ շրջանային կոմյերիտական կոնֆերանսների վորոշումները— շրջանների քաղվարչությունների պետերը և նրանց հաստատումից հետո միայն կենսագործվում են այդ վորոշումները։

## VI ՀԱՄԼԿՑԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԵՌԱՑՈՒՄԸ

23. ՀԱՄԼԿՑԵՄ շարքերն ընդունվելու համար տրված դիմումը քննում է նախագահությունը և վաշտային կոմյերիտական կազմակերպության ժողովը, ու հաստատվում է ընդհանուր գնդային կոմյերիտական ժողովի կողմից:

Առանձին վաշտերում (եսկադրոններում, զորախմբերում և այլն) ՀԱՄԼԿՑԵՄ շարքերն ընդունվելու համար տրված դիմումները քննում է վաշտի կոմյերիտմիության բյուրոն և հաստատվում է ընդհանուր գնդային ժողովի կողմից:

ՀԱՄԼԿՑԵՄ անդամների և թեկնածուների ստաժը հաշվվում է ըս կըզբնական կոմյերիտական կազմակերպության ժողովի կողմից ընդու-

նելության վերաբերյալ վորոշման որից։

24. Կոմյերիտմիությունից հեռացնելու և կոմյերիտականներին միութենական պատիժներ տալու հարցը քննարկում է նախագահությունը, հետո վաշտի կոմյերիտական կազմակերպության ժողովը և գնդային բյուրոն ու լուծում և ստանում սկզբնական կոմյերիտական կազմակերպության ժողովի կողմից։

Կոմյերիտմիությունից հեռացումն ու պատիժները (անձնական քարտի մեջ մտցնելով) հաստատվում են դիվիզիական (սրան համազոր) կուսակցական հանձնաժողովի կողմից, վորին պարտադիր կերպով պետք է ներկա լինի այն կոմյերիտականը, վորը զանցանք է կատարել։ Կուսակցական հանձնաժողովների վորոշումն-

րը կարելի չէ բողոքարկել Շրջանային Կուսակցական Համաժողովին, ԲԳԿԲ Քաղվարչության Կուսակցական Համաժողովին և ՀԱՄԼԿՅԵՄ Կենտկոմին։

25. Կոմյերիտական կազմակերպությունները պարտավոր են, առանց սպասելու կոմյերիտականի դիմումին, վորը պատիժ է ստացել, վորոշված ժամկետն անցնելուց հետո, կրկին քննարկել նրա վարքագիծը և աշխատանքի հարցը, վորոշելու համար, թե ուղղվե՞լ է արդյոք կոմյերիտականը, և դրական լինելու դեպքում դնել նրանից պատիժը վերացնելու հարցը։

## VII ՀԱՄԼԿՅԵՄ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՊԸ

26. Կարմիր բանակի զորամասերի կոմյերիտական կազմակերպություն-

ները սերտ կապ են հաստատում ՀԱՄ
ԼԿԳԵՄ տեղական կազմակերպություն
ների հետ, որտեղ իրենք գտնվում
են։

27․ Զագմարմինների և կոմյերիտական կազմակերպությունների ներկայացուցիչները զորամասերի կոմյերիտական կազմակերպությունների գործության և աշխատանքի մասին զեկուցումներ են տալիս ՀԱՄԼԿԳԵՄ տեղական կոմիտեների նիստերում, ՀԱՄԼԿԳԵՄ կոնֆերանսներում և համագումարներում։ ՀԱՄԼԿԳԵՄ կոմիտեներն ու ՀԱՄԼԿԳԵՄ քաղաքացիական կազմակերպությունները, իրենց հերթին զեկուցումներ են տալիս դիվիզիական լիս դիվիզիական և շրջանային կոնֆերանսներում։

28․ ՀԱՄԼԿԳԵՄ տեղական կոմիտեները զորամասերին ու քաղորգան–

ներին մատակարարում են համապատասխան ղեկավար նյութեր:

29. Կարմիր բանակում գտնվող ՀԱՄԼԿԵՄ անդամները մասնակցում են ՀԱՄԼԿԵՄ կոմյերիտական ընդհանուր կոնֆերանսներին, կոմիտեների ընտրություններին և ՀԱՄԼԿԵՄ կոնֆերանսների ու համագումարների պատգամավորների ընտրություններին:

## VIII ՀԱՄԼԿԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

30. ԲԳԿԲ զորակոչված ՀԱՄԼԿԵՄ անդամներն ու թեկնածուները, այլև մի զորամասից մյուսը տեղափոխվող ՀԱՄԼԿԵՄ անդամներն ու թեկնածուները հաշվի յեն առնվում սկզբնական կոմյերիտական կազմակերպություններում կոմյերիտական տոմսը և

անձնական քարտը ներկայացնելու դեպքում։

31. Սկզբնական կոմյերիտական կազմակերպության բյուրոյի քարտուղարը պարտավոր ե անձամբ մանրամասնորեն ստուգել իրեն ներկայացրած կոմյերիտական փաստաթղթերը և, այդ փաստաթղթերի իսկական լինելու մեջ համոզվելուց հետո, հաշվի յե առնում յեկած կոմյերիտականին։

Կոմյերիտական փաստաթղթերի մեջ յուրաքանչյուր թերություն հայտաբերելու մասին (չի մուծված անդամավճարը, ջնջումներ, ուղղումներ, կոմյերիտական տոմսի և անձնական քարտի միջև հակասական տվյալներ) կոմյերիտական բյուրոյի քարտուղարը հայտնում ե գործամասի կոմիտա-

րին (քաղաքղեկավարին) անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար:

32. Կոմյերիտականների անձնական քարտերը պահվում են զորամասի կոմիսարի (քաղաքղեկավարի) մոտ, որպես գաղտնի փաստաթղթեր:

33. Բանակի սկզբնական կոմյերիտական կազմակերպություններում հաշվառումից հանելը կատարում է անձամբ կոմյերիտական բյուրոյի քարտուղարը, որը ստուգում է հաշվառումից հանվող կոմյերիտականների կոմյերիտական փաստաթղթերի իսկությունը, նշում է կատարում անձնական քարտի մեջ հաշվառումից հանվելու ժամանակի մասին և քարտն անձամբ տալիս է կոմյերիտականին, աշխատանքի նոր վայրը ներկայացնելու համար:

34. Կոմյերիտական անդամության տոմսերի ու թեկնածուական քարտե-

րի պահպանման, հաշվառման ու հանձ-
նելու կարգը վորոշվում է հատուկ
հրահանգով, վորը հրատարակում է
ԲԳԿԲ Քաղվարչությունը և ՀԱՄ-
ԼԿԵՍՄ Կենտկոմը։

## IX ԱՆԴԱՄԱԿՑԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԸ

35. *Կարմիր բանակում* ՀԱՄԼԿԵՍՄ *այն անդամներն ու թեկնածուները, վորոնք* ՀամԿ(բ)Կ *անդամներ ու թեկնածուներ չեն, ամեն ամիս անդամավճար են տալիս հետևյալ չափով։*

*Մինչև* 100 *ռուբլի աշխատավարձ ստացողները վճարում են* 20 *կոպեկ.*
101-*ից մինչև* 150 *ռուբ. ստացողները վճարում են* 60 *կոպեկ.*
101-*ից մինչև* 150 *ռուբ. ստացողները վճարում են* 60 *կոպեկ.*

151-ից մինչև 200 ռուբ. ստացողները վճարում են 1 ռուբլի
201-ից մինչև 250 ռուբ. ստացողները վճարում են 1 ռ. 50 կոպեկ
251-ից մինչև 300 ռուբ. ստացողները վճարում են 2 ռուբլի
301-ից մինչև 500 ռուբ. ստացողները վճարում են աշխատավարձի յերկու տոկոսը։

500 ռուբլուց բարձր աշխատավարձ ստացողները վճարում են իրենց աշխատավարձի 3 տոկոսը։

Կարմիր բանակայինները— ՀԱՄ-ԼԿՑԵՄ անդամներն ու թեկնածուները վճարում են 5 կոպեկ։ ՀԱՄԼԿՑԵՄ այն անդամներն ու թեկնածուները, վորոնք ստանում են ամիսը մինչև 30 ռուբլի, վճարում են 10 կոպեկ։

ՀԱՄԼԿՑԵՄ շարքերը մտնելիս, վոր պես մուտքի վճար տալիս են անդամավճարի կրկնակի չափով։

39. Կոմյերիտական այն կազմա-

կերպություններում, վորտեղ անդամների թիվը հասնում է մինչև 150 մարդու, անդամավճարների ընդունումը կատարում է անձամբ կոմյերիտական բյուրոյի քարտուղարը․ 150 հոգուց ավելի յեղած դեպքում կատարում են նախագահությունների քարտուղարները (կոմյերիտկազմակերպիչները)։

37․ Կարմիր բանակում ՀԱՄԼԿՅԵՄ բոլոր անդամներն ու թեկնածուները (այդ թվում նաև կոմյերիտական ՀամԿ(բ)Կ անդամներն ու թեկնածուները) տարեկան վճարում են ռազմաշեֆական վճարը և ինտերնացիոնալ վճար այն չափերով, վորոնք սահմանվում են ՀԱՄԼԿՅԵՄ Կենտկոմի կողմից։

38․ Անդամավճարների վերաբերյալ հաշվետվությունը սահմանվում է ԲԴԿԲ Քաղվարչության հատուկ ցուցումով։

Պատ. խմբագիր՝
Խ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Տեխ. խմբագիր՝
Ի. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ա. ԱՐՁԱՔԱՆՅԱՆ

*Հրատ.* 4033, *գլավ. լիազոր* Գ—4100
*Պատվեր* 379, տիրաժ 2000

---

*Հանձնված է արտադրության*
4 *մարտի*, 1937 *թ.: Ստորագրված է*
*տպագրության* 1 *ապրիլի*, 1937 *թ.*

---

*Պետհրատի տպարան, Երևան,*
II *Կոմունյանցի* 4.



1142

Пров. 1940 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038738

A I/3775